600.0201.29.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2016 թվականի №201Ա
քաղ. Երևան

«ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՇԱՅԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետը, 10-րդ, 17-րդ, 17.1 հոդվածները և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 13-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» №169Ն որոշումը և հաշվի առնելով «ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՇԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջ 2016 թվականի հունիսի 21-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Բավարարել «ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՇԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջ հայտը և Երևան քաղաքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրել 152,575ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն՝ 10 տարի գործողության ժամկետով:

2. Հաստատել «ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՇԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջը Երևան քաղաքում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար տրամադրվող 152,575ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. «ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍԱՇԱՅԻ» անհատ ձեռնարկատիրոջը՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում 900005330213 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված թույլտվության տրամադրման վճարի 99 տոկոսը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 հունիսի 2016 թ.
ժամը 16[00]